

# ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԱԽՆԵԱՑ

## Պ.Ա.ՏՄՈՒԹԻՒՆ Վ.ՐԱ.8

(Տես Հատ. ԽԱ, Էջ 80, 155, 209. ԽԲ, 18, 110):

### ԳԼՈՒԽ ԺԴ

Վախրանեցայ բնիդիմանայ Պարսից և հայուհցուցանել զնոսա թեղ թյնս. — Երբ Վախրանեցայ յԵրուաղէմ, և մարտան լու նորա վեդ Պարսից՝ ի Հնդիկս. — Շահատակուրիմբ Վախրանեցայ՝ ի Սեղիկս, և ասպառակել թեղ Պարսից յաշխարհն Զարահաց. — Թարձ Վախրանեցայ՝ ի Վիրս, հանդիք Քետրոսի և Սամուելի, և որ ինչ անցք անցք ընդ Կոփակուսն Միհրայէլ. — Գաղուսա և հաստատորիքն Քետրոսի կարուղինիս՝ ի Վիրս, հանգերք եպիսկոպոսակցօք իւրովք, ընդ Հնդիկեայ դատեր կայսեր Յունաց՝ ածեան՝ ի կնուրին Վախրանեցայ. — Յաղուրուրին Վախրանեցայ՝ ի Վիրայ Պարսից և հարկանի նի ի նոցան կարեվէր. — Գաղուսա Զնննի կայսեր յօգնուրին Վախրանեցայ և պատերազմել ընդ Պարսից. — Ման Վախրանեցայ:

Խակ թագաւորն Պարսից լուաւ զրւատ նորա ընդ թյնս. բարկացաւ յոյժ, ել անձամբ՝ բազմութեամբ զօրաց՝ ի թյնս, և անդէն մեռաւ ։ Եւ թագաւորեաց որդի նորա. և ել՝ ի վերայ Վախրանեցայ, և կոռուցան ընդ միմեանս զամիսս չորս. մինչև եկն զօր՝ ի կայսերէ ութառն հազար, հանգերձ պարգեգօք: Եւ զայն իմնցեալ Պարսից թագաւորին՝ խնդրեաց հաշտութիւն՝ ի Վախրանեցայ, ասելով. Ընդէլը կը ուռւիմք վասն զենի. եթէ իցէ Աստուած հուրն՝ ինքնին առցէ զլրէծ իւր՝ ի Խաչելցն: Եւ ասէ Վախրանեց. Ահա գի-

1 Օրինակն Պրուէի համաձայն ընդ Վախրանեցայ՝ զնոսէ Պարսկէն կարգէ չեւ՝ ի գլուխ հանեալ զիսորհուրդ արշականաց նորա՝ ի թյնս:

2 Մեհրանգութեամսայս էն նյոն ինքն՝ զոր Քըրեանաւորեաց Վախրանեց՝ ի ճեռաց Սասց, զորց՝ ի վեր անդր ասացաւ:

3 Թաւէի բյնաբին, որպէս յշեաց՝ ի վեր անդր, որ և՝ ի մերայոցն անուանէր բյեաշխն

տես՝ զի ամենայն թագաւորլը հարկս տային ձեղ, մինչև հաւատացին՝ ի խաչեալն, և նովաւ զօրացեալ յալթեցին ձեղ՝ որք պաշտէք զկրակ, զոր ես զի ջնուցի աստ յաշխարհիս իմում, և առաքեցի առ քեզ զքրմապետ նոցաւ Եւ արդ, Քրիստոս՝ Աստուած իմ է, և հուրն աստուած քո իցէ՝ թէ կամիս. և ես ազգ Ներոպլիմայ եմ, բայց զու ունիս զաթու նորա. Հնազանցեցայց քեզ՝ որպէս հօր: Եւ արարէն այնպէս. և առւեալ միմեանց պարզեաւ՝ տեսին զիրեարս: Եւ ես Վախրանեց զըոյր իւր ԱՄիհրանցուխտ՝ թագաւորին Պարսից խորորովու՝ ի կնութիւն. զի միւս քոյրն խորազնէ առ Հայոց Պատիհաշխոյն՝ զրաւ էր: Եւ եղեւ մինորդ վախրանց ընդ թյնս և ընդ Պարսս, և արար խաղաղութիւն՝ ի մէջ նոցաւ. և եթող խորորով զիրուսալէմ՝ ի թյնս: Այլ կինն Վախրանեցայ՝ ծնաւ երկուուրիս՝ արու և էգ, և մեռաւ ինքն. և կոչեցին զանուն արուին Դաչէ: Եւ Վախրանեց արար՝ ի վերայ սոկիակազմ՝ սուզաւարտին պատկեր դայլը և առիւծու. վասն որոյ՝ ի ժամ պատերազմին տեսնեալ զնաւ և ճանաչեալ ասէին. ի բաց եղերուք՝ ի դայլէ և յառիւծու. և կուցցաւ նա խորգասաւ, այսինքն Գայլափիւծ՝ ի Պարսից լեզուն: Բայց յոյս նորա որ առ Քրիստոս Աստուած՝ փա-

Վրաց, յարոց սակի էին և քաջածանօթքն այլուստ Աշուշա, Վաղցէն, և այն, զի գաւառ նոցին Սոմենթ անուանեալ՝ ի Վրաց մերթ ընդ բնեալն այս յընթաց պատմութեանս անուանի Բակուր, իսկ խորազնէ անուանի խորանէ, և էր աւագ քոյր Վախրանեցայ:

ռաւորհեր զնա հանապաղ. զի կոյսրն առաքեաց նմա մեծ շնորհակալութիւն և պարզես՝ 'ի ձեռն լեւոնի զօրադիլի, և բազում ընծայս թագաւորին Պարսից:

Եւս այսորիկ ստիպեալ 'ի սիրոյն Քրիստոսի՝ չոգաւ վախիմանգ յերուսաղեմ, ընդ իւր տանելով զմայր իւր և զքոյրն. և ողջունեալ զսուրբ տեղիմն դարձան մեծաւ ուրախութեամբ, և եկն յլինդակ<sup>1</sup>: Եւ մեծարեաց զնա Պարսից թագաւորն՝ <sup>2</sup> զի 'ի Պարսսերթից մարբն և քուերբն, զի արացեն զհարսանիս քեռն նորա, զոր ետ 'ի կնութիւն Խոսրովու: Եւ գնացին 'ի Բարելոն, և ընկածեալ եղեն մեծաւ պատուսվ, և արարին ուրախութիւն ամիսս վեց. և միծամեծ պարզեօք յուղարկեցին զմայրն վախիմանգայ<sup>3</sup>: Եւ առեալ Խոսրովու զվախիմանգ՝ գընաց 'ի Զուրջանէթ, ուր է մայրստքազաքն Գելան. և արարին զնա անապատ 'ի բնակչաց ազգին, և բնակեցուցին անդ Պարսիկ, և կան 'ի հարկի Պարսից մինչեւ ցայսօր: Եւ անտոի գնացին 'ի Հնդիկու, և յաւարի հարին զընդարձակ տեղիսն, բաց 'ի քաղաքացն՝ որբ կային 'ի վերայ ծովուն. և անդ եսօպան վախիմանգ երկուտասան ըմբիչ. և առին հարկս՝ մուշկս և ամբարս՝ հստպար հազար լսեր, և ծխանելիս, նասս<sup>4</sup> և ակունս, զմբուխա՛ յակունիթ՝ բեռն

<sup>1</sup> Ալլին է՛ Անտաք կամ Անտիպետա:

<sup>2</sup> Վախիմանգ 'ի մէջ ածէ զգեր արքային Պարսից առ Վախիմանգ Թագաւոր, զոր ոչ անդեպ վարդանմէ յեղուլ ասո 'ի հայ, ոտ ի պարզել զիւրհուրդ մատաց Պարսիկն ընդ հաշտութիւնն զոր ընդ Յոյն խօսեաց 'ի ձեռն Լւսոնի ջրառ. գըմի. « Արացուք փութեալ զոր ինդրեն 'ի մէջ. ըստ կամաց քոց վարեա զաքրութիւն քու առաքեա հրաման ի՛ Մերայ քաղաքաբան՝ զորս ետու քեզ, Անաքեցի և Արաքարան առ Կայսրը յանձնէ 'ի ձեռն որու զիւրհանութիւն գտաւառաց մերոց և զքաղաքաց: Դիմուս քաջ զի ամենայն պարսիկ որեար որ միանգամ յանուն իմ երդուակը և կործանեալ զքաղաքաբանի Յունաց, զայրացուն ընդ իւս 'զի յիմոց տամա 'ի ձեռս նոցա Էրկուս արքունի գաւառու: Ալլ այժմ աղաքեմ զքեզ աալ ինձ զքոյր քո 'ի կուռթիւն, և զալ այսր 'ի հայրեկի ալիսրհն մըր աեսենել զքսանիս, և 'ի թշիկունս ինձ լինել ընդդէմ թշնամեաց լսեց 'Հարաշեաց, Նշամացւց, Հընդ-

մի նախ, և յոսկոյն Սովերայ հարիւր թեռն ուղոսոց, և արծաթ' հինգհարիւր բեռնս, քանզի յամեցին զտմա երիս:

Եւ գնացին անտոի 'ի Մնդիկս. և թագաւորին Մնդիկյ ել ընդդէմ նոցա, և կոտորեաց 'ի զօրացն Պարսից զրադւմա. սակայն զօրքն քրիստոնէից փախուցին զնոսա, և արկին 'ի Սինդաբերգն և քաղաք ամուր, Եւ ելանէր աւուր աւուր թագաւորն Սինդապայ անձամբ ախոյեան. և զորս ելանէին ընդդէմ նորա՝ փութով սատուկէր, և չանսոյր որսալ զվախիմանգ, Եւ 'ի զիշերին արար զետնափորս 'ի դրան քաղաքին ծածուկս, և թագոյց 'ի ներքատան այր ընտիր, և առաքեաց զմի ոք մենամարտ զի խնդրեսցէ զվախիմանգ, և յարուցեալ արքն 'ի դիպոլ ժամուկայն զվախիմանգ: Եւ յորժամ ել ախոյեանն և ինդրեաց զվախիմանգ, և չոգաւ առ նա Սայուրմանկ հենուպն վախիմանգայ, և սպան զնա: Բայց 'ի գտանալն յետո՞ յարեան դարանամուտն և սպանին զնա: Եւ տրտմեցաւ յոյժ Վախիմանգ, և ելաց զնա որդէս զեզրայր սիրելի, զի մննդակից նորա էր: Զնիկ այսորիկ ել թագաւորն Սինդապայ 'ի Պարսկակն<sup>5</sup>, և ասէ. Լսէ զրանս իմ, արքայդ Վրաց, զի ասացից քեզ՝ թէ ում իցեւ զու նման. նման ես գուազուուն, որ առ զրազայն փետտեալ

կաց և Սինդապայ, որոց քարհաճեալ զնին՝ անսասաւեցին հրամանի իշխանութեանս իմոյ: Եւ 'ի գալ քո այսր օրէն լիցի ինձ ասել առ աւագ արքայր մերց Ալախիմանգայ՝ զի ըստ փափաքարտանց եզօր մերց Ալախիմանգայ՝ արքաք հաշտութիւն ընդ Յոյն, որբ և ձեռն տան ինձ ընդդէմ թշնամեաց մերց, ընկալեալ 'ի պարզեկ մասն զեկունի գաւառու տերութիւն իմոյ. և այսու օրինակու զիցի ասելութիւն Պարսից ընդդէմ Յունաց»:

<sup>3</sup> Օրինակն Պրոսէի ունի զմայրն Վախիմանգայ և զըյլ նորտ:

<sup>4</sup> Ալլ է՛ ակե Բարձմագունենան, առեալ 'ի լուտինէ ամերա, որ է սար:

<sup>5</sup> Ասքէմ վրիպական Թարդմանէ Պրոսէ առաւ Ժխանելիաց համ անուշից:

<sup>6</sup> Եվ վախիմանգ ունի. Ել առ դրուն քաղաքին. թշնամեաց լսեց 'Հարիսիս իպէ:

յայլոց ընկերացն իւր, և դարմանեաց զնա՝ ի բօյն իւր, բերելով նմա մանր ճճիս և օձ. իսկ նա սակաւ մի կաղդուրեաւ՝ կալաւ զազռաւն և եկեր զնա՝ ասելով, եթէ Ոչ կարեմ զօրանալ այս պիսի կերակրով, մինչ ոչ եմ կերեալ թռչուն։ Արդ գու զիհետսեալդ՚ի մէնջ և յայլոց՝ թեւաւորես հակառակ Փայոցդ հաւատոց քրիստոնէութեան։ Եւ ասէ ցնա Վախիթանդ. Ոնմիտ գու և մուկն խրւրդ, որ ոչ ունելով աշու՝ կայ ՚ի ներքոյ հողոյ, անմասն ՚ի գեղեցիութենէ երկնի և երկրի և ՚ի ճառագայթից արեգական, և ուրախ է ՚ի կեանս. նոյնպէս և գու կոյր մոռք՝ ոչ տեսանես զոր արարի ես. լննաս ընդ ոչ տեսանեն՝ զոր արարի ես, զհաւատն իմ սերմաննել ՚ի տան հոյ, ՚ի գաւառն Պարսից կանքնել զերիստոնէութիւն. և զերուսարչմ իսկ զտեղի փառացն Քրիստոսի՝ առի ՚ի Պարսից՝ զտեղի ստից Աստուծոյն իմոյ։ Եւ ոչ եկի ՚ի խնդիր փառաց և ընչից աշխարհականց և ապականացուաց, ընդ որով թաղեալ կաս զու, որպէս խլուրդն ՚ի ներքոյ հողոյ։ Զի մեր իմաստո. թիւնն հրամայէ մեզ՝ գնել զոնձինս ՚ի վերսոյ եղբարց, զի և զաշխարհն իմ և զուրբ եկեղեցին պահեցի ՚ի զգուշութեան, ՚ի ճառայութիւն տալով զանձն իմ։ ՚ի թողութիւն մեղաց իմոց. և թէ յայսուիկ մեռանիցիմ իսկ ՚ի մահօւանէ ՚ի կեանս փոխիմ։ Եւ ասէ ցնա թագաւորն Սինդայ. Եթէ հաւատաս սցիժմ՝ եկ ապա ՚ի դուրս, և փոխեցից զբեզ ՚ի մահօւանէ ՚ի կեանս, որպէս զիշխանն քո՞ որ ցնաց կարապետ քեզ։ Եւ ասէ ցնա Վախիթանդ. Եկ արտաքս, և նախ ես առաքեցից զբեզ ՚ի խաւարն արտաքին զօրութեամբ քրիստոսին իմոյ, որ նա փոխելոց է զիս ՚ի կեանս՝ յոթ ժամ՝ և զիտէ։ Եւ գնացին դիմեցան երկողեանն. և եհար Վախ-

թանդ զիլինդայն նիզակաւն, և ընկէց զնա յերիփարէն, կարեվէր խոցեալ ՚ի մահ. և առեալ զոտիցն՝ տարաւ զնա ՚ի քարշ՝ առաջի թագաւորին Պարսից. և եղի ուրախութիւն մեծ, և գովութիւն նմա յամենեցունց։ Եւ ածին ճարտար՝ թժկել զնա ՚ի վիրացն. և սակաւ մի ուշաբերեալ նորա, թողին զնա յիւրան, և ատան։ Եւ առին պատանդ երկուս յորդւոց նորա, և հարկս կրկին քան զշնդկացն. և տուաւ այն ամենայն վախիթանդայ, և այլ բարում ընծայս։ Եւ արարեալ հաշտութիւն՝ զնացեալ եկին ՚ի Հարաշէթ<sup>1</sup>, յերկիրն Բուշացոց՝ սահմանակցացն Պարսից, զինի չորից ամացն՝ զոր արարին ՚ի Հնդիկս և ՚ի Սինդէթ, և նստեալ կային ազգն Հարաշէաց ՚ի տղմուատեղիս եղեղանց՝ ուր ոչ կարէր կոխել չորդուանի և ընթացք նաւէ։ Բայց հնարին իմն Կորեցին զըուրն, և առին ըղնոսա և կոսորեցին. և հազար տուն ածին ընդ ինքեանս, և ցրուեցին յայլ և այլ տեղիս. և սորա են ազգն Քրդաց և Քուշանդն, այլ և այլ են<sup>2</sup>.

Եւ եկին ՚ի սահմանս Հայոց և Յունաց։ Եւ զի ընդ նոսա էր Լեւոն զօրա. վարն Յունաց՝ բազում զօրոք, չոզաւնա յերկիրն իւր, տալով ընդ ինքեան դեսպանս, զի ածցեն զդուստրն կայսեր, ՚ի կոնութիւն Վախիթանդայ, և զի ձեռնադրեացեն զՊետրոս կախուղիկոս Վրաց, և զՄամուէլ եափսկոպոս։ Եւ կայսրն և պատրիարքն կոստանդնուպօլսոյ՝ առաքեցին զՊետրոս քահանայ և զՄամուէլ կրօնաւոր՝ յԱնտաք, զի անդ ասցեն ձեռնադրութիւն, զի ձերէ, ասեն, վիճակն այն։ Եւ կատարեալ զինդիրն արձակեցին զնոսա ՚ի վիրս։ Իսկ թագաւորն վախիթանդ չոգաւ ՚ի Քարմէլ. և ել ընդ առաջ նորա Դաշէ որդի նորա, և ամենայն փառաւորքն Վրաց, և արարին մեծ ուրախութիւն

1 Որպէս գիւրին է իմանալ՝ ոչ ՚ի Հարաշիս Ափրիկէ, այլ ՚ի գաւառ մի չնդկաց, որոց գյուն մասնը եր հանդոյն Ափրիկեցուցն։

2 Պառէ ունին. Եւ են սոքա բազմաթիւ ազք Քրդաց և Քուշանաց, որ և զիսուրդս զայ.

սոսիկ՝ նոյն համարի ընդ անուանեցն ՚ի մերզոյ Խորենացու Քուսափ Խորասանք, որոց սահման ձերէ ՚ի մոնից ՚ի Մարս և ՚ի Պարսիկս, և յելի՛ միջէ ՚ի Հնդկէս. զորս ոչ է պարտ շփոթել ընդ Կորդուացիս Կորմէկց Սնծին Հայոց։

'ի մտանել նորա 'ի Մշկսիթա : բայց ե-  
պիսկոպոսն Միքայէլ իրեն զիտաց՝ ե-  
թէ կաթուղիկոս և եպիսկոպոս դան 'ի  
Վիրս' առանց կամաց նորա գժւարե-  
ցաւ . և պատճառանօք կշտամբէր ըզ-  
վախթանգ , որպէս թէ երկրպագեալ  
է նա հրոյ : իսկ թագաւորն երդնոյր և  
աղաջէր զնա՞ եթէ Քրիստոս է իմ Աս-  
տուած ծնմարիտ , և մի պարտաւորեր  
զիս զուրք : Եւ եպիսկոպոսն ոչ լսէր նը-  
մա , այլ անէծ զնա , և արար ընդ բա-  
նիք : Եւ ասէ թագաւորն Պէպէտ և  
անմեղ եմ 'ի բանէ պատի , բայց են իմ  
և այլ յանցանք առաջի Տետառն , և վասն  
այնորիկ խոնարհէլ արժան է ինձ ա-  
ռաջի նորա : Եւ չոգաւ և անկաւ յոտս  
եպիսկոպոսին , և համբուրեաց և խըն-  
դրէր թողութիւն : իսկ նա առ.'ի նմանէ  
զոտն , եհար զբերան թագաւորին , և  
խլեաց 'ի յատամանց նորա : Եւ առեալ  
զատամն իւր թագաւորն՝ ասէ . Այդ  
դործ մեղաց իմոց էր և սատանայի , որ  
ամբարձ զքեզ ընդդէմ իմ . զի այդ  
ոչ է քո պատուիրանն որ ասէ . Զե-  
ղէդն ջախչախեալ մի բեկցես , և ըզ-  
պատրոյն առկայծեալ ոչ շինուացես .  
և դու նախանձեցար ընդ Փետրոսի , և  
դու առեր զբուգայի նախանձն : Եւ ա-  
ռաքեաց զնա առ պատրէարքն իս-  
տանդնուալուի , և զհանեալ ատամն  
զինի , զի արացէ գատաստան առանց  
աշռանաց : Եւ տեսեալ զՄիքայէլ՝  
պատրիարքին , ասէ ցնա . Ադահու-  
թեամբ մարտեար ընդ եկեղեցի իրեն  
Յուղաս , և հեղեր արիւն , և այն՝ ո-  
տիք , և բերնոյ թագաւորին , և զշե-  
նուածն Աստուծոյ քակիցեր . և արդ  
մի լիցիս արժանի քահանայութեան ,  
զի մահապարատ ես տեսառն քո : Եւ ըն-

դէր ոչ լուար Պաւլոսի՝ որ ասէ . Հնա-  
ղանդ եղերուք թագաւորի . որ և ասէ .  
Ազօթեցէք թագաւորի , ապա թէ ոչ  
զիտացնիք զի ոչ վայրապար ածեալ է  
սուսեր ընդ մեջ , Եւ յափսորս առաքե-  
ցաւ նոյն ժամանյն Միքայէլն :

իսկ Անստիգու պատրիարքն և 'ի  
ձեռնագրելն զՊետրոս կաթուղիկոս ,  
արար նմա և երկուտասան եպիսկոպո-  
սուած . և նախ ՚ի կոստանդնուպօլիս  
դնացին , և առեալ բազում պարգես  
և զդուսոր կայսեր զՀեղինէ ։ , և այն-  
պէս չոգան առ Վախթանգ : Եւ զուար-  
ճացաւ երկիրն : Եւ նստաւ կաթուղի-  
կոս Միքայէլայ յեկեղեցւոյն՝ զոր շի-  
նեաց Վախթանգ , զԱլիոն , և Սամուէլն  
նստաւ յեպիսկոպոսարանին Միքայէլոյ  
և եպիսկոպոս մի նստաւ ՚ի Կլարձէթ ,  
և մի յԱրտահան , և մի ՚ի Զաւանէթ ։ ,  
և մի ՚ի Մանկիս , մի ՚ի Բաւղնիս , մի  
յԻիշա , մի ՚ի Սուրբն Նինաւ կոչե-  
ցեալն , ՚ի վերայ գրանն Աւշարմոյ , մի  
՚ի Զերամ , մի ՚ի Չելթ , մի ՚ի մէջ երկուց  
եկեղեցեայն , մի ՚ի Խորնոյրոջ , մի ՚ի  
յԱկարակ՝ հանգէպ խունանայ : Եւ չի-  
նեաց Վախթանգ եկեղեցի ՚ի Նիքօզ՝  
՚ի վերայ վկայարանին Բաժգենոյ պար-  
սիկ մնացողի առաջին կնոյն Վախթան-  
գայ , որ հաւատոց 'ի Քրիստոս , և 'ի  
Պարսից բռնադատեալ վասն հաւա-  
տոցն՝ ոչ ուրացաւ զՔրիստոս , և սպա-  
նին զնա 'ի բարի զաւանութեանն իւ-  
րում՝ 'ի փառ Քրիստոսի Աստուծոյ ,  
և 'ի սեղող վկայարանին նորա՝ եգաւ  
աթոռ եպիսկոպոսի : իսկ Հեղինէ ծնաւ  
՚ի Վախթանգայ երիս որդիս և զուսոր  
մի ։ : Եւ նստաւ Վախթանգ 'ի յԱւ-  
ջարմա , տուեալ զմեծ մասն երկիրն՝  
երեց որդւոյ իւրոյ Դաշէի . և զիորանձէ

ասին , բաց 'ի պատմագրաց Վրաց . Երեսն իցէ  
առ ոչ գուստա , այլ 'ի մերձաւորացն կայսեր :

3 Պակասի յօրինակին Պրոոքի և 'ի Թարգ-  
մանութեանն և մի յԱյստահան և մի ՚ի Զաւա-  
յակը :

4 Պրոոք ունի Ասորբ-Հեան :

5 Հաստ Վախթանգայ՝ երիս որդիս և երկու  
դասերս , և ըստ Վախթանցան՝ երկուս որդիս և եր-  
կու դասերս :

գրոյր իւր զաւագ՝ ետ ՚ի կնութիւն չա-  
յոց բգեշխին՝ բակուրոյ:

Յայնմ յամնակի մեռաւ խորով  
թագաւորն Պարսից, և նստաւ յաթու-  
նորա որդին իւր՝ հոմանուն հարցն <sup>1</sup>. և  
առաքեաց առ վախթանգ զի առա-  
յնորդ լիցի նմա՝ երթալ պատերազմաւ  
՚ի Յոյնս: Եւ արկեալ էր վախթանգ  
հիմ քաղաքին Տփիսեաց, և շնչը զնա  
ժրութեամբ: Ետ պատասխանի թա-  
գաւորն, և ասէ. Ոյն է առակ՝ որ ա-  
սեն. Գարբին, սրեա զսուրդ, զի հա-  
աից զզլուկի քո: Եւ ասէ. Երթայք ա-  
սացէք ցնա՝ որ առաքեաց զձեզ առ իս.  
նախ ընդ իս մարտիր և տպա ընկ Յոյնս,  
զի սիրեցաք մեք զքեզ և պարոպեցու-  
ցաք ՚ի մեզ, Յաւուրմն յայնոսիկ Դաչէ  
տուեալ զորդի քեռ իւրայ՝ անց ընդ կու-  
խէմը, յերկիր Լաւպատայ, ՚ի քարա-  
ժայու գերբուկի անձաւացն, որոյ բնա-  
կիչք էին խուժադուժ ազգաց քաղմու-  
թիւն յոյժ, որք պաշտէին զհուր և ըդ-  
ջուր: Եւ ամրոցաւ ամենայն երկիրն <sup>2</sup>:  
Եւ չոգաւ վախթանդ և կին իւր և որ-  
դիքն՝ ՚ի ճորն Շշարմնյ՝ երեսաց Պար-  
սից արքային, քանզի լուան եթէ գոյ  
՚ի վերալ նորա: Որ և եկն վաղվազակի,  
և ստորեաց զքաղաքն կամբեչոյ և բղ-  
րերդն ձերամոյ. և հստեալ ՚ի կուխէմը,  
և բնակեցան յօրին գետն: Եւ ել վախ-  
թանգ երկու հարիւր քառասուն հա-  
զարաւ՝ ընդ եօթնհարիւր քառասուն  
հազարաւորացն Պարսից՝ ՚ի մուշլ ա-  
ւուր. և կոստորեաց մինչև ՚ի պաղատ  
թագաւորին Պարսից, և սպոն զրզի  
նորա զբարտամ, և զերծաւ թագա-  
ւորն Պարսից: Բոյց պարսիկ մի խո-  
ցեաց զքանին զայն վախթանգ ՚ի կուշ-  
արն՝ կարեվէք. սակայն պնդեալ զսիր-  
տըն՝ ել ՚ի պատերազմէն յաղթաւ-  
թեամբ, կոստորեալ ՚ի նոցանէ հարիւր

1 Որ է քաջածնութն Խոսրով-Անշառէվան.  
զորմէ աւանգէ Վարդան որպէս թէ ՚ի մեռա-  
նեւ իւրում՝ ընկածէալ իցք զօրէնս քրիստո-  
նէութեան, ՚ի մեռն կաթուզիկոսն Հայոց  
Քրիստոփորի Ա. առ որ հաւասաւ ընծայեսցէ իւ-  
րաքանչեւր որ ըստ շափու կամանց, քանից բաց  
՚ի գրոցն Վարդանայ՝ չգտանեմ այլ ուրեք յե-  
շատակութիւն ինչ զայնմանէ:

Երեսուն հազար, և գնաց ՚ի յլլվերման:  
Յայնմ ժամանակի մեռաւ կայսրն  
Յունաց, և թագաւորեաց Զենոն որդի  
նորա, և եկն օգնել Վախթանգայ. և  
հասեալ ՚ի Սպեր լուաւ զրօթ վիրաւո-  
րեցն ՚ի մահ զլախթանգայ, և դար-  
ձաւ ՚ի կարնոյ քաղաք: Խոկ թագա-  
ւորն Պարսից խոսրով աւերեալ զջըփ-  
խիս և զլրմաղ և չուրջ զՄցիմիթաւ,  
և չոգաւ ՚ի վերայ Յունաց. և մար-  
տեան ընդ միմեանս Պարսից և Յոյնք. և  
մնաց մարտն յերկուց կողմանց. և գար-  
ձան Պարսից ընդ Քարթիլ:

Եւ մեռաւ Վախթանգ, յորով պա-  
տուիրանաւ՝ որդւոյն՝ Դաչէի, որոյ ետ  
զմագաւորութիւնն, և ամենայն զո-  
րացն՝ վասն հաւատոյ քրիստոնէու-  
թեան և միամտութեան. և թաղեցաւ  
՚ի Մցիմիթա: Եւ թագաւորն Պարսից  
դարձաւ յերկիր իւր:

## Գլուխ ԺԵ

Յազորդորիւն բազարոց և կարույիկոսաց,  
և արշաւանք Օսաց. — Արշաւանք Հերակլ կայ-  
սր՝ ՚ի վերայ Պարսից և նուաձել նորա զԱլիրս.  
Լարդ պայզառուրեալ իշխանաց և կարույիկո-  
սաց ՚ի վիրս. — Զրամանակ Մանենի և Հազա-  
րացոց, և աւերկ զլրատան և զրբակայս. —  
Պատերազմն նոցին և պարտորիւն՝ ՚ի վրաց. —  
Պարսիստ և հաստատորիւն Ազրմասի և այլոց  
ուեաց ՚ի վիրս:

Եւ Դաչէ թագաւորեաց վրաց. շի-  
նեաց զամենայն աւերեալմն Պարսից:  
Մեռաւ կաթուզիկոսն Քետրոս, և էառ-  
զամտոն Սամուել, և յետ նորա թա-  
փիջան էառ զոթոռն, և զկնի նորա  
Զիմաք: Ննջեաց և թագաւորն Դաչէ,  
և էառ զմագաւորութիւնն որդի նո-  
րա <sup>4</sup>, և զկնի նորա թագաւորեաց Փարսի-

2 Ոյն է երկիրն Վարաց՝ առաջի արքային  
Պարսից:

3 Եւեմերորդ չորրորդ արքայ, խոսրովու-  
նի. իշխանաց ամ 14, ՚ի 499-514:

4 Ոյն է Խոսրովանին Բակուր Երկրորդ,  
երեսներորդ հնակերպարդ արքայ, յիշատակեալ  
՚ի Վախթանգայ, որ էկաց յիշատակութեանն  
զամ 14, սկաել ՚ի Ծ14 ամէն մինչեւ ցամ 628.

ման որդի նորա<sup>4</sup>, Յաւուրս սորա ելին  
Օպն<sup>5</sup>, և աւերիցին զբարիլ. և զի ան-  
պարապ էին Եղինք յարիմատից կողմանց՝  
օգնել Փարսմանայ, խնդրեաց ՚ի Պար-  
սից օգնութիւն, զի հնազանդիսցի նո-  
ցա հարկատրութեամբ, բայց զի հա-  
ւատոյ և եկեղեցւոյ մի արացցն ըըռ-  
նոթիւն: Եւ լուան նմա Պարսպ, և ոչ-  
ինչ նեղէին վսան հաւատոց իւրեանց:  
Խակ զինի մահուանն Փարսմանայ՝ էառ  
զթագաւորութիւնն միւս Փարսման<sup>3</sup>,  
եղբօրորդի նորա և էր նա այր բարե-  
միտ և շինիչ և զարդարիչ եկեղեցեաց:  
Մեռաւ կաթուզիկուն Զիմաք, և նըս-

տոցին կաթուզիկոս՝ առանց Անդա-  
քու, զլաբա, զի յայնմ հետէ ինքեանիք  
իսկ Վիրաք գնէին կաթուզիկոս յազգէ  
նախարարացն. քանզի վինի Ստարայ,  
նատաւ թէլաթի: Յաւուրս սորա եկն  
Յովհաննէս<sup>6</sup> ՚ի Միջազեացի ՚ի Վիրաք,  
այր սուրբ և պատշելազործ, որ արար  
յոլով նշանս ինքն և աշակերտին իւր.  
և գրեցան իրքն և եղան յեկեղեցիս  
Քարթայ<sup>5</sup>, ի թագաւորէն Միջնանայ  
մինչ եկերրորդ Փարսմանն են ամբ եր-  
կերիւթ<sup>6</sup>. յիշատակ բարի զինի իւր:  
Յաւուրս սորա<sup>7</sup> մեռաւ Սամուէլ, և  
էառ զաթոռն Բարթուզոմէսոս: Յու-

Ակսել, յանուանէն Թափիշանայ մինչ ցոյքը՝  
պահանի յօրինակին Պրոռէի:  
1 Երեսներորդ վեցերորդ արքայ, խոռորդու-  
նի. որց իշխանութիւնն ճգկցաւ ընդ ամ 14,  
՚ի 528-542:

2 Վարժանակ զՊարսիկս ասէ ելեալո ՚ի վերաց  
Վրաց փախանակ Սուաց:

3 Երեսներորդ եօմներորդ արքայ, խոռոր-  
դունի, իշխաց ամ 15, ՚ի 542-551:

4 Յավաննանն այս լուսորդի անուաննեաց  
վրաց աշխարհին, էր յանձնանօթ ծնողաց ՚ի  
Միջագետս. որց ՚ի զարդանալ հաստիկն՝ վարժ  
գուառ յանձնայն ուստինաւ ժամանակին, և  
զարդարեալ բազուած առաջինական ճրիւք.  
վանն որց և ետ նմա Ալատուած շնորհ բժշկու-  
թեանց և պանչեեցաց: Կամերով սորա խոյ-  
տալ ՚ի պատուոյ և ՚ի բազմինուն զիմողաց  
առնա, ընդառ յանապատ, և գագարաց անդ  
ժամանակն ինչ. յետ որց հրաման պատուի-  
րանի ընկալեալ ՚ի հրեշտակէ Անաւունյ էջ՝ ՚ի  
Վիրս, հանգերձ երկասասն աշակերազ իւ-  
րովք, ուր խնկեալ և ընկալեալ ՚ի թագաւոր-  
ունի և ՚ի համեռ զիկոսւն զաւուն. անդ  
արքա նոր բնակութիւն. և էր անդ պատ-  
մանակաւ տեղի պաշտաման հռոց: ուր բնակէին  
գեք բազում և գազանք՝ լաւախը կալմանցն.  
յորոց զառաջինն հայտեալ ազիւթէ և ըդ-  
վերինն ընտելացուեալ, եկաց անդ ընդ եղ  
արս ճգնացք եց կենց, առաքերով զնո՞տ ՚ի  
շրջակաց կողմանա՝ ՚ի Վիրս, ՚ի Կամերով, ՚ի Գա-  
րեզան և այլուր, բարողել զիրօն քրիստոնէու-  
թեան, իսկ ինքն եկաց մաս ՚ի Եղին անդ ընդ  
մում յաշակերաց իւրոց, ուր է հանգեալ առաջ՝  
՚ի Տեր՝ պատուեան և քաջալերօ տուլով շրջա-  
կայից, յառաջ վարելց զորք նորէշահ քա-  
րուութեանց:

5 Ակսորէկ անծուշ ՚ի Յայսմաւորս, որը  
ընթերցեալ լինէին յեկեղեցիս Վրաց:  
6 Այս է յամ 342-542, ըստ Վախուչա-  
պատագրի:

7 Այսինքն, յաւուրս Ստեփանու կիւրապա-  
շատի. զի ՚ի Փարսմանայ մինչ ցայս վայր պա-  
կասն բազում ինչ ՚ի պատմութենէն. այն է

որ ինչ անցին առ թագաւորութեալ Բակու-  
րի (342-ըրդ արքայ, խոսրովւնի, իշխաց  
վամ 13, ՚ի 557-670) որդւոյ Փարսմանայ, առ  
որով ՚ի ձախողել իրացն Պարսից Վիրաք ապա-  
փեցան ոտ Ցյոնս, ինդրելով ինքեաց թա-  
գաւորս ՚ի Մարտիկ Կայսերէ: Քանի յետ մա-  
հուան Բակուրի, Որդիգը՝ արքայ Պարսից ա-  
ռաքեաց իշխել ՚ի վերաց Վրաց և Աղուանից  
զորգին իւր՝ զի արուով Աբրոււս կամ Անե-  
րուսուս որ և զինի սակաւ ժամանակաց բոնա-  
գաեցան թուուց զիշանութիւնն և երթաւ-  
՚ի Պարս՝ ՚ի թիթունն հօր իւրց ընդ գետ Յու-  
նաց, յորմէ խրախուսեալ Վրաց ձեռն եռան  
Մարտիկ Կայսերի ինքրելով զօդութիւնն երթին  
և զաջուր գրքայութեանն իւրեանց. որ և ետ  
նոց ՚ի թագաւոր զՊորամ (երեսներորդ ին-  
եկերորդ արքայ, իշխաց ամ 23, ՚ի 573-600).  
յորմէ սիլվրն առան հինգերորդ Հարաբե-  
թիւնն Վրաց, այն է Բագրատուննացան. և էր  
առ բատ պատմութազ Վրաց Բագրատունի ՚ի  
հօրէ և Խոսրովնի ՚ի մօրէ. քանզի համարի  
Վախուչալ զի Պորամոց ումեմն ամենատաքեալ  
ընդ գետ Միջնաբայ եզրոր Գառէի, որ էկաց  
341 արքայ Վրաց, ծնաւ զորգի Յագրատան անուն,  
և ՚ի մի մօրնոյս ծնաւ միւս Պօրամ՝ յանձնանօթ  
մօրէ. Վրացան այս եկաց առաջնորդ թագաւոր  
բագրատունի ՚ի Վրաց, յանուանի հօր իւրց  
յորընկեալ սագրատառնի, որ էկաց և ՚ի առ-  
ջարտունութիւնն Այս պատման հետին համա-  
րական առաջնորդ Պատմութիւն Յագրատան վայ-  
րուց որոց ոչ շատացեալ ՚ի Հըեթց անտի իշ-  
աննելու յնուսին, ոյլ և մանկական երեակայու-  
թեանը միւս ցլուզումի իսկ և ցՄարգարէն  
Պատմէ հանել անբործեն զարս սերընդոց ոչ-  
գին պարգիւն:

Զինի Պօրամայ ՚ի խնաց որդի նորա Սակիա-  
նոս՝ 40երորդ արքայ, վամ 19, ՚ի 600-619,  
յորմէ սկսանի գարեւեալ պատմանուն յանուա-  
գարէ զբանն: Խակ կաթուզիկոսացն յաջոր-  
դուում մինչ ցայս վայր, ըստ Վախունեաց  
եղին զինի Յելաթեայ կամ Եւաւեայ Մակար,

ւուրսն յայնոսիկ սպանաւ կայսրն Մուրիկ՝ 'ի փոկասայ՝ զօրականէ միոչէ, որ և թագաւորեաց 'ի վերայ Յունաց : Եւ լուս զրօթ աներոյն՝ իւրոյ՝ Քամբէ թագաւորն Պարսից . բարկացաւ և ել յերկիրն Յունաց, և աւերեաց գաւառս բազում, և գերեաց զերուսաղէմ և զիսան տէրունական : Եւ Սահեփանէ իշխանն Վրաց՝ գարձաւ 'ի Պարսից Հնապանդութիւն՝ յերկիրէ նոցա, և նըստէր 'ի Տիֆիս, իսկ զփոկաս սպանեալ Հերակլայ՝ ազգականին Մուրկայ, և թագաւորեալ 'ի վերայ Յունաց, և ածեալ զօր յարեմտից 'ի Թուրքաց՝ բազում յոյժ, և ել 'ի խնդիր կենսատու Խաչին . ճանապարհ կալեալ ընդ Հայու եկն՝ 'ի Բնանունիս, և անտի ելանէ 'ի Տիֆիս : Եւ Ստեփանոս ոչ ելանէ 'ի Հնապանդութիւնէ Պարսից . այլ փակեաց զքաղաքն, և պատերազմէր ընդ կայսեր՝ ելանելով 'ի դուրս աւուր աւոր, և 'ի քաջացն Յունաց մեռանէր : Եւ յետ սպանանելյն զնա՝ առին զքազքն, բայց 'ի կլայէն, յորմէ թշնամանեաց զկոյսարն աւադ բերգին, ասելով. Արի զնա, քօշ հասեալ, զի շես նման թագաւորի, այլ քօշի ունիս պարանոց և մօրուս : Եւ կայսրն իբրև լոււաւ՝ խնդաց 'ի սրտի, և ետ բերել զդիրսն Դանիելի, և բացեալ ինդրեաց զտեղին՝ յորում՝ գրեալ էր 'ի թէ Զօրանայ քօշն այծեաց՝ որ գայ յարեմտից, և հարկանէ զիսոյն յարելը՝ մեծաւ զօրութեամբ : Եւ ասէ յզօրսն . թէպէտ անարգեաց զիս այրն

առ Բակուրաւ՝ 38 Երորդ արքայիւ, յետ Մուկարայ՝ Եղաւ Ոիմն, գարձեալ յաւուրս Բակուրայ, և եեաց մինչև յաւուրս Գորամց, և յետ անուան նորին եգաւ . Վամուշէլ շնչի սորն մրս Վամուշէլ Նոյնպէս առ Գորամուն, զոր փոխանակեաց Բարգաւզմէռ յիշեալն՝ 'ի պատըւ առ Ստեփանոսիւ :

1 Պատէ Վախթանգ՝ 'թէ ուրպէս զհալսնականն Խոսրով յերեսաց թշնամեաց իւրոց՝ ժողովալ Վաւրիկ կայսեր Արքաներաբար, Հաստատեաց զնա Վերասին յանուն թագաւորութեան Պարսից, առաջուն նմա զգուստը իւր 'ի կուութիւն :

2 Ապոներակն այս խոսրովունի էր, գորով որդիք յերեսոյն Բակուրայ, յազգէ Դաշէի 'որդու Վախթանգոսոյ, և էր 'ի մանուկ ետան 'ի մեռանէլ հօր իւրոյ, և 'ի բռնանալ Որմզդի Պարսից արքային 'ի վերայ Վրաց, և 'ի յանձնել

'ի սրտէ իւրմէ, այլ ձգեաց առ իս ըղբանս զայս : Եւ կոչեաց առ ինքն զիւմըներսէն՝ յազգէ Դաշէի, որ էր 'ի կուխէթ, և ետ 'ի նա զցփիփս, և եթող առ նմա զզօրագլուխն Զիրզա, և ինքն չոգաւ 'ի Պարսս : Եւ առին զլայյն . և կարեալ գանարզիչն կայսեր՝ Զիրազն, նախ զրեանն ելից ոսկով. Զի խնդաց, ասէ, կայսրն 'ի բան բերանոյ քո . և ապա հանեալ զմորթն հասոյց կայսեր, վասն նախատելցյն զնա : Իսկ որդին Քարսէի՝ սպան զնա<sup>3</sup> . և արարեալ սէր ընդ կայսեր՝ ետ 'ի նա զիսան Տեառն առ առ առ գարձաւ Հերակլի զինդ ամաց, և եկն 'ի Մըցիիթա . և էառ 'ի Մանկլեայ և յերուշէթոյ՝ զոտից Տեառն տախտակն, և զինդ առ զոտուեալն 'ի կոստանդիանուէ Միհրանայ թագաւորին, և տարաւ ընդ իւր, ոչ լսելով աղերսանացն Ատրներսէի և ամենայն Վրաց աշխարհին արտասուացն :

Իսկ զինդ մահուանն Բարզողովմէռի կաթուզիկոսի՝ էառ զաթուն Յովիչան, նէս, և յետ նորա Բարեկասս, և զինդ նորա Թափիոր : Եւ զիշխանութիւնն Վըրաց զինդ մահուանն Ատրներսէի՝ էառ որդի նորա Ստեփանոս<sup>4</sup>, այլ պինդ հաւատով և տօնասէր, որ կարգեաց զօր ուրբաթուն Խաչի մեծ ժողովով առաջի Խաչին սրբոյ, և զօր հինդշաբաթուն մեծացուցանել 'ի սուրբն Սիոն 'ի կաթուզիկոսարանն, և զերեթքշաբաթն<sup>5</sup> տօն Ստեփանոսին ախալվային

անդ զաթոռ աշխարհին՝ որդւայ իւրում Խոսրով-Արքունէսի . ըստ Վերոյգչիւրցա, Ախարիներսէն մերժեցաւ 'ի ժառանդութենէ արքայութեանն . բայց 'ի կոչել զնա Տերակի առ մինքն էր 'ի նա յայուժամ անխարար Ասեմիթյ կամ Կուփենէթոյ՝ ըստ պատմագրիս : Իշխաց սա զման 20, 'ի 619-639, գոլով քառասներորդ առաջներորդ 'ի գասակարգի արքայից, բայց ոչ կը էր զիսըւմ արքայի, այլ միայն մրավար, որպէտ գլուխ աշխատաց և նախարարաց :

3 Այսինքն, Կաթուուն սպան զհայր իւր Խոսրով կամ Խաղուէ, յամին 628, զի ոչ կամէր սա զինդ պարտութեանն 'ի Հերակլեայ՝ խոնարհէն 'ի հաշառութիւն :

4 Քառասներորդ Երիբորդ իշխան, խոսրովին, տիբեաց զամն 24, 'ի 639-663 :

5 Վախթանգ ասէ զօր շայ արուն :

և ամենայն վկայիցն . և ոչ զանազանել ,  
ասաց , զորքաթն և զի՞նջարաթն 'ի  
մեծէ ուրբաթէ և 'ի մեծէ հինջարա-  
թուն :

Զայնու ժամանակօք երեւցաւ Մահ-  
մէտ առաջնորդ և օրէնտիր Սարակի-  
նոսացն և ազգին Արարկաց , որ տի-  
րեաց բազում՝ աշխարհաց . և քսան ամ-  
կալեալ զիշխանութիւնն . . . եցաւ  
Եւ եկաց 'ի տեղի նորա Արուբարք , որ  
մոռաւ զօրութեամբ մեծաւ 'ի Պարաս ,  
և զի նուաղեալ էր թագաւորութիւնն  
նոցա՝ կալաւ 'ի հնապանդութիւն . և  
մաեալ 'ի Բարելոն՝ թողուլ ետ զիրա-  
պաշտութիւնն , և գարձոյց յօրէնս Սա-  
րակինոսաց : Եւ 'ի մեռանելն նորա՝ կա-  
լաւ զիշխանութիւնն թմառ : Եւ պատ-  
մեցին Հերակլի՝ եթէ Սարակինոսպն  
կամին մոռանել 'ի Շամա . և 'ի Զագի-  
րէթ , որք են սոքա աշխարհ Միջագե-  
տաց : Եւ ել կայսրն յերկիրն Փղշաա-  
ցւոց <sup>1</sup> , և ետես անդ այր Յասոււծոյ մի-  
նաւոր մի՝ որ ասէք . Փախերուք 'ի փա-  
խուցելցն Սարայի . որպէս և կոչին իսկ  
Սարակինոսպն , որ է՝ Սարայի սպասա-  
ւորք <sup>2</sup> . քանզի Տէր ետ զիհարաւ և զա-  
րենելս և զիհւսիս ազգի նոցա . և նորա  
են աստեղք մոլորեալք՝ որ տիրեն ան-  
մոլորիցն : Եւ գտանէին գուշակմունք  
նոցա 'ի զիրս փիլիսոփայիցն Հերմի-  
տոսնի <sup>3</sup> և ի իջինտոսի , եթէ ի մեծ  
թուին հինդհազար ութէ հարիւլ շրեք-  
տասան երեկը <sup>4</sup> աղախնորդին յազգէն  
արդարութեան <sup>5</sup> Ոթի , և տես հնդիցս  
եւթնորդս պակաս Ե , որ են ամք եր-  
կերիւր քառասուն : Եւ շրջնցաւ իտ-  
գաւորն Հերակլ , և եկն գարձեալ 'ի  
Պարթէլ , և ասէ՝ գաղթեալ ազգին Պար-

1 Զինուեմ վրիպակէ . արգեսք 'եթէ 'ի շա-  
նազանութէնէ ձեռագիր օրինուկին կամ ուզ-  
գելով զձեռագիրն ըստ Վախոթ անդոյ՝ զփշուա-  
ցւոցն Պաղեստինացոց թարգմանէ Պրոսէ :

2 Վախմանդ ասէ՝ Սարայի իրիւլք , յարմա-  
րելով զկոյումն ըստ յունակին ձայնին . իսկ  
'ի հայում' թուի ակնարկել 'ի բան Ասպե-  
լցն առ Պարատացիս . Գլ . Դ . 30-31 :

3 Թերեւս անուանին Հերմէս Տրիմերիստոս  
կամ իւստածն :

4 Յօրինակին էր Ա :

5 Պրոսէ կամ ընթեռնուել յազգէն ազարու-

մից իսմայիլացւոցն <sup>6</sup> 'ի կողմանս հիւ-  
սիսոյ , եթէ Ահա սպառեցաւ թագաւո-  
րութիւն ձեր , և զօրացան Սարակի-  
նոպն , ելէք եկալք առ մեղ : Եւ նոցա  
թողեալ զգանձն իւրեանց յանդէտու ,  
տարան զզիր գանձուն զկնի , և զնա-  
ցին զիստ Հերակլի : և այնու զրովն  
գան Յոյնք գտանեն զնոսա : իսկ Մտե-  
փանոսի Վրաց իշխանին էին երկու  
սրդէք , Արշիլ և Միհր անուանին նոցա ,  
որց եա զամենայն ատացուածն իւր .  
և թաղեցին 'ի տեղիս տեղիս՝ յերեսաց  
իսմայելի , և փախեան յեզդրիս . քանզի  
չոգտու 'ի վերայ նոցա և փարթլոյ 'Մը-  
րուան՝ որդի Մահումօդայ <sup>7</sup> , որ կոչէր  
Խուլ , և կալաւ զիուռն Դարիալոյ , և  
աւերեաց զրհակութիւն լերինն կովկա-  
սու : Եւ լրւաւ եթէ տէրքն Փարթլոյ  
փախեան յեզդրիս , և անսոի յԱվիտ-  
գէթ , ել զիստ նոցա , և էառ զամրոցն  
Եղբա : և էջ 'ի վերայ բերդին Անակո-  
փոսի , յորում կայր Տիրամօրն պատ-  
կերն անձեռագործ , զոր ոչ դիտէ՝  
ուսամի իցէ , քանզի գտաւ նա՝ 'ի գլուխ  
լերինն գօրին : Եւ յայնմ բերդի կային  
Արշիլ և Միհր <sup>8</sup> , զինի մահուան հօրն  
իւրեանց : Եւ զօրագլուխն Յունաց Լե-  
ւոն՝ մոտեալ 'ի բերդն Սուրբազայ՝ յելսն  
Սսիթոյ՝ ամրանայր անդ : Եւ ասեն ցմի-  
մեանս հարազատքն . Եթէ աստ մմամբ՝  
առնուն զամուրն , և յիշատակ ոչ թո-  
ղուն մեղ . և գտանձն՝ զոր ժողովեցինն  
քրիստոսապատակն Միհրան , և յԱս-  
տուծոյ իմաստնացեալն Վախմանդ՝  
կորնչին անդտանելիք . և զայն ևս՝ զոր  
Հերակլ աստէն եթող , զորոց զդիրն  
եղագլուկ երկուց թագայն զմրիստեաց .  
արդ , Աստուծով սրտապնդեալք , բա-

րեամ իրու յԱբարայ . Այլ յայտ է՝ որչափ ան-  
չէթէթ է 'ի հայումն ապարարին Փախմանակ  
Սարայ :

6 Խոսնակ է իմաստն . Թուի լինել զադրե-  
լոյ ազգին Պարայ 'ի կողման հիւսիսոյ՝ յերե-  
սաց իւսակացուցն :

7 Վախմանդ ասէ որդի քես Մահմետի , և  
Արդրմէլիք , որ կալաւ զիշխանուրիւնն յես մա-  
հուան Մահմետի . իսկ զպահան յոյց կոչման  
Մրուանց ասէ ոչ խուլ լինել , այլ վի ոչ յան-  
ձն առնոյր լինել բանից խորհրդակցաց իւրոց :

8 Քառասուներորդ երրորդ թագաւորք , խոս-

րեխոսութեամբ Պետրոսի և Պաւլոսի, և  
զօրութեամբ պատկերի Տիրամոնն՝ որ  
ընդ մեզ, ելցուք՝ ի վերայ նոցա ՚ի կող-  
մանէ ծովուդ զառ ՚ի թափի: Եւ ելին  
երեք հազարաւ, և Ցէր էարկ ՚ի նոսա-  
տապաստ սասաթկ յոյժ. և մեռան ՚ի  
Ճետոնէ ցաւզք՝ երեսուն և հինգ հա-  
զար, և սրով արանց՝ երեք հազար: Եւ  
պակասեցան ՚ի քրիստոնէիցն արք  
վախտուն, և խոցեցաւ Միհրն: Եւ ոմն  
՚ի Սարակինոսացն ասէ ցրանակն իւր.  
Աստուած ետ մեզ յաղթութիւն տասն,  
որպէս խօսեցաւ ընդ Արրահամու և  
ընդ Ադարու, և ոչ ընդ արս աստուա-  
ծայինս, և ընդ տաճարս անուան նո-  
րա<sup>1</sup>: Եւ յարեան անտի և նստան ՚ի  
վերայ հօթնակնեան գետուցն երկուց:  
Եւ յանկարծ ակի յարեաւ գետն՝ ՚ի  
սասաթկ հեղեղաց, և տարտ ՚ի զօ-  
րացն Հարալեաց, որք կային ընդ նո-  
սա՝ քսան և երեք հազար այր, և ձիս  
երեսուն և հինգ հազար. և յայնմանէ  
կոշեցաւ գետն պատահամբ գործոյն  
մինն՝ Զիմենիս Ծղալ, և միւսն՝ Հարա-

շիս Ծղալ: Եւ մնացեալքն ելին ընդ ճառ-  
նապարհ Գօրին, և անցին ՚ի Սպեր  
գաւառ, և գնացին: Եւ զերծ ելցոն քրիս-  
տոնէից տուեալ փառք Աստուծոյ, ա-  
ռավեցին և յուցին կայսեր՝ որ ինչ ե-  
ղեն: Եւ լրւեալ նորա՝ խնդաց ՚ի Ցէր.  
և առավեաց թազաւորն երկուց եղ-  
բարցն թուղթո քաջալերութեան: Այլ  
՚ի խոցյ անտի՝ մեռաւ Միհրն, և թա-  
ղեցաւ ՚ի Մշլսիթմա: և դադարեաց եր-  
կիրն ամս երկուտասան:

Յաւուրմն յայնոսիկ իշխան ոմն ՚ի  
տանէ Գաւթի մարգարէի, Ադրնաս  
կոչեցեալ, եկն առ Արշինն<sup>2</sup>. որ լեալ  
էր ՚ի Հայս, և զերեալ որդւովիքն յայլ-  
ազգեացն, և զերծեալ անտի՝ խնդրէր  
՚ի նմանէ տեղի բնակութեան. և ետ  
նմա զիիշա և զԵզուեր և զԱլտօնէ: Ե-  
կին և ՚ի Տարնոյ եղբարք երեք<sup>3</sup>, և  
բնակեցան մինչև ցաղցալ՝ հրամա-  
նաւ Արշին: Եւ կինն Արշին էր գուսար  
Գորոմայ կիւրապաղատին, ՚ի զարմիցն  
Վախթանգայ արքայի:

Շարունակելի:

<sup>2</sup> Քառամերորդ չորրորդ արքայ, խոսր-  
վունի, զինի մահուան եղբօր իւրց իշխեաց  
շամն 50, ՚ի 668-718:

<sup>3</sup> Հայ Վախթանգայ՝ էին սոքա եղբօրոր-  
դեք Արշինասի:

